«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա – Խմբային աշխատանքի միջոցով մշակութային կարողունակության ձևավորումը

Առարկա – Հայոց պատմություն

Ուսուցիչ – Մ. Գևորգյան

Դպրոց – Ավ. Իսահակյանի անվ. N16 ավագ դպրոց

Ղեկավար – Ա. Ղուկասյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն——————————————————————————3

Գրականության ակնարկ——————————————————————5

Խմբային աշխատանքի միջոցով մշակութային կարողունակության ձևավորումը -5

Եզրակացություն——————————————————————————10

Գրականության ցանկ——————————————————————11

Հավելվածներ ——————————————————————————12

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը

Մեր ուսումնասիրության նպատակն է հետազոտել մշակութային կարողունակության ձևավորումը խմբային աշխատանքի միջոցով: Աշխատանքի նպատակը բխում են հետևյալ խնդիրները.

- սահմանել խմբային աշխատանքը, սովորողների խումբը,
- ուսումնասիրել աշակերտների խմբային աշխատանքը՝ որպես դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչ,
- դիտարկել խմբային աշխատանքի սոցիալ-մանկավարժական հնարավորությունները,
- իրականացված հետազոտության միջոցով վերլուծել և բացահայտել խմբային աշխատանքի դերը մշակութային կարողունակության ձևավորման ու զարգացման առումով:

Թեմայի կարևորությունը և նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար

Թեմային ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, սովորողակենտրոն կրթական գործընթացում աշակերտների մեջ համագործակցային հարաբերությունների ձևավորումը կարևոր նշանակություն ունի և բխում է երեխաների մեջ այնպիսի հմտություններ ու ունակություններ ձևավորելու ու զարգացնելու պահանջից, որոնց ուսումնադաստիարակչական պարապմունքների այլ ձևերում լիովին չեն դրսևորվում: Խմբային աշխատանքը նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Մշակութային կարողունակություն:

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին

Հանրակրթական պետական չափորոշիչ:

Գրականության ակնարկ

- **Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,**
- **Մեջբերումներ գրականությունից տեղեկության վստահելի աղբյուրներից :**

Պարտադիր է կատարել հղում աղբյուրներին

Խմբային աշխատանքի միջոցով մշակութային կարողունակության ձևավորումը

Խորհրդային դաստիարակության տեսության հիմնարար դրույթը կոլեկտիվի և կոլեկտիվի միջոցով իրականացվող դաստիարակությունն էր: Խորհրդային ժամանակներում շեշտը դրվում էր կոլեկտիվի գաղափարական-քաղաքական ազդեցության վրա անհատի, նրա շտկող-վերահսկող գործառույթի վրա, ինչը ներկայումս արդիական չէ: Ներկայումս, երբ ոչ միայն հռչակվում է, այլև փորձեր են արվում իրականացնելու անհատակենտրոն մանկավարժության գաղափարները, շատ մանկավարժներ կա՛մ դադարել են խոսել, խմբային աշխատանքի ձևավորման խնդիրների մասին, կա՛մ ամեն կերպ փորձում են քողարկել այդ խնդիրը, ավելի շատ շեշտը դրվում է ներխմբային հարաբերությունների սոցիալ հոգեբանական կողմերի վրա: Խմբային ուսումնական գործընթացի կառուցվածքային հիմքում ընկած է մանկավարժ-սովորող խմբի փոխազդեցության ձևը: Խմբայինի ուսուցման կառուցվածքային հիմքը յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխազդեցության ձևն է, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել համընդհանուր համագործակցության ու փոխօգնության վրա հիմնված ուսուցման գործընթաց: Սովորողների խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրները իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները: Այստեղ սովորողների համագործակցությունը չի սահմանափակվում միայն համատեղ քննարկումներով: Սովորողների միջև փոխգործակցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ

ուսումնասիրությունների, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով:

Սկսած միջին դարերից՝ սկզբնավորվում, սատիճանաբար ձևավորվում ու համընդհանուր գերակայություն է ստանում աշակերտների կոլեկտիվը՝ որպես ուսուցման կազմակերպման խմբային եղանակ: Միաժամանակ, արդեն կայացած խմբային եղանակի ընդերքում սաղմնավորվում և աստիճանաբար նշմարելի իրողություն է դառնում ուսուցման կազմակերպման խմբային եղանակի գաղափարախոսությունը ներկայացնող համագործակցային ուսուցումը:

Վերջին ժամանակներում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդները, որպես առաջին քայլեր, հնարավորություն են տալիս իրագործելու աստիճանական անցումն ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվին: Խմբային աշխատանքի միջոցով ստեղծվում է բարոյական բարձր ու գեղագիտական դաստիարակիչ հասարակական հարաբերությունների, գործունեության ու շփման համակարգ, որը նպաստում է երեխայի ձևավորմանն ու դաստիարակում յուրաքանչյուր աշակերտի անհատականության զարգացմանը: Ցանկացած սոցիալական խումբ ունի ինչ-որ ընդհանրություն՝ սոցիալական ընդհանուր առմամբ առանձնացված որոշակի հատկանիշներով՝ ազգակցական, դասային, ազգային համատեղ գործունեության բնույթով: Սոցիալական հոգեբանության մեջ խումբը կամ կոլեկտիվը սոցիալական միջավայրի փոքր խումբ մաս է կազմում, որտեղ իրագործվում է ամենօրյա մարդու կենսագործունեությունը, և որը հիմնականում պայմանավորում է նրա սոցիալական վարքագիծը, սահմանում է նրա կոնկրետ դրդապատճառները, ազդում է անձի ձևավորման վրա:

Ըստ Լ.Ի.Նովիկովայի՝ փոքր խումբը հատուկ խումբ է մարդկային ընդհանրության, որն ունի հետևյալ բնութագրերը՝ հարաբերությունների հիերարխիա, աշխատանքի բաժանում, համատեղելիություն, գործունեության համակարգում, կազմակերպության գործընթացներ և վերահսկում: Կոլեկտիվի նշված հատկանիշների որոշ հետազոտողներ ավելացրել են վարքագծային միասնական արժեքներն ու կանոնները, ընդհանուր շահերն ու նպատակները: Շփման օգնությամբ խմբային աշխատանքի միջոցով ձևավորվում է կոլեկտիվ: Խումբը մարդկանց մի ամբողջություն է, որը առանձնացված է որևէ մեկի կամ մի

քանի, նրանց համար ընդհանուր առանձնահատկությունների հիման վրա: Խմբի զարգացման բարձրագույն աստիճանը կոլեկտիվն է: Կոլեկտիվը մարդկանց բարձր զարգացած փոքր խումբ է, որտեղ հարաբերությունները կառուցվում են բարոյականության դրական նորմերի վրա: Որքան խումբը իր զարգացման մարդկանցով մոտ է կոլեկտիվին, այնքան ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում անձի լավագույն կողմերի դրսևորման ու խթանման համար, նաև վատագույնի արգելակման համար: ԵՎ ընդհակառակը, որքան խումբը իր զարգացման մակարդակով պաշտպանում է կոլեկտիվից, այնքան ավելի շատ հնարավորություններ է ներկայացնում անձի վատ կողմերի փոխհարաբերությունների համակարգում դրսևորման համար՝ միաժամանակ արգելելով լավագույն ձգտումները:

Մակարենկոյի մանկավարժական համակարգի մեթոդաբանական հիմքը անձնավորության և հասարակության փոխհարաբերության հարցն է, որի հիմքում խմբային աշխատանքն է: Մակարենկոն սկզբունքորեն նորովի իմաստավորվեց խմբային աշխատանքի խմբային աշխատանքի դերը երեխաների դաստիարակության գործում, որը նրա մանկավարժական պրակտիկայում վերածնվեց դաստիարակչական ազդեցության առարկայի և ներգործում էր կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի վրա: Նրա կարծիքով՝ մանկավարժը միայն առաջին շրջանում է խմբի լիիրավ կազմակերպիչը: Դաստիարակչական գործառույթների զարգացումը, ինքնակառավարման մարմինների ստեղծումը և կոլեկտիվ հարաբերությունների ձևավորումը զուգընթաց մանկավարժը ավելի ու ավելի է հետին պլան մղվում: Ի՞նչ է տալիս սովորողին խմբային աշխատանքը.

- բավարարում է երեխայի հաղորդակցման ու ինքնահաստատման կարիքները,
- հանդիսանում է նրա կենսագործունեության ոլորտը (անձը մշտապես գտնվում է ինչ-որ միավորումներում, խմբերում՝ մտնելով բազմաբնույթ փոխգործակցության և այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ),
- հարուստ զգացմունքային փորձ,
- վարքագծային փորձ, որի սոցիալական արժեքը շատ կարևոր է երեխայի հետագա կյանքում,

- ստեղծում է պայմաններ շփվելու ու ուրիշների հետ շփվելու միջոցով ճանաչելու սեփական արժեքներն ու խնդիրները,
- հնարավորություն է ընձեռնում դրսևորելու իր անհատականությունը,
- ինքնադրսևորվել՝ ընտրելով այն, ինչը հետաքրքիր է, համապատասխանում է ուժերին ու ունակություններին:

Ըստ Մակարենկոյի՝ միայն խմբային աշխատանքի միջոցով է հնարավոր սովորողի գիտակցության մեջ արթնացնել հասարակական կարծիքի հզոր ուժը՝ կարգավորող ու կարգապահություն հաստատող դաստիարակիչ գործոն: Երեխայի վրա կարելի է ներգործել՝ ազդելով այն խմբի վրա, որի անդամն է նա: Այդ դրույթը Մակարենկոն անվանել է «ԶՈՒԳԱՀԵՌ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ»: Այդ սկզբունքի մեջ մեջ է իրագործվում խմբի՝ «բոլորը մեկի, մեկը բոլորի համար» պահանջը: Մակարենկոն կոլեկտիվի կարևորագույն օրենքներից մեկը համարում էր «Կոլեկտիվի շարժման օրենքը», ըստ որի՝ եթե խումբը հասնում է առաջադրված նպատակին, սակայն իր առջև նոր նպատակներ չի դնում, երբ չկան այնպիսի ձգտումներ, որոնք կոգեշնչեն խմբի անդամներին, ապա այդպիսի խումբը ապագա չունի, դրա գոյությունը կանգ է առնում:

Դ.Բ.Էլկոնինը առանձնացնում է խմբային գործունեության վեց փուլեր.

1. Առաջին փուլը կոչվում է «պասիվ ծաղկում»: Երեխան խմբի հանդեպ դառնում է ակտիվ, նորգործող ոչ թե այլ երեխաների վարքագծի վրա ազդելու իր ցանկության պատճառով, այն պատճառով, որ մյուս երեխաները ընդօրինակում են և հետևում նրան:
2. Երկրորդ աստիճանը «մասնակի ծաղկումն» է, որն արտահայտվում է առանձին պահերին:
3. Երրորդ աստիճանը «ակտիվ ծաղկումն» է, որն ընդգրկում է շփման գործընթացի զգալի հատվածներ, սակայն չի տարածվում ողջ գործընթացի վրա:
4. Չորրորդ աստիճանը «ակտիվ ծաղկումն» է, որն ընդգրկում է ընդհանուր առմամբ համագործակցության գործընթացը:

Ա.Ա.Մակարենկոն (ով այդ սկզբունքը մտցրեց իր պրակտիկայում և անվերապահորեն հետևեց նրան) զգուշացնում էր, որ այդ միասնության անտեսումը

կամ թուլացումը անխուսափելիորեն կհանգեցնի ակտիվի և բոլոր կոլեկտիվ հարաբերությունների քայքայմանը: Ակտիվ երեխաները պետք է ուսուցչից ստանան նրա վստահության ապացույցներ, պետք է հատուկ պահպանել նրանց հեղինակությունը ընկերների աչքերում՝ հարգանք ցուցաբերելով նրանց նկատմամբ: Սակայն ակտիվի անդամներին ներկայացվող պահանջները պետք է ներկայացվեն բազմիցս ավելի լուրջ, քան մյուս սաներին: Խմբային աշխատանքի անցկացումը, ըստ Մակարենկոյի, պետք է անընդհատ լինի: Այն պետք է ուղղություն ստանա այնպիսի մանկավարժական կոլեկտիվի կողմից, որը ստեղծագործաբար որոնում է նրա առաջխաղացման առավել արդյունավետ ուղիները:

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարելի է եզրակացնել.

1. Խմբային աշխատանքն իրականացվում է սովորողների խմբի միջոցով, որը ընդհանուր նպատակներով միավորված մարդկանց խումբ է, որը համատեղ գործունեության ընթացքում նպաստում է ձեռք բերված սոցիալական արժեքավոր հատկանիշների բարձր մակարդակի զարգացմանը,
2. խմբային աշխատանքի զարգացումն անցնում է մի շարք փուլերով՝ խումբ, խումբ-ասոցիացիա, խումբ-կոլեկտիվ,
3. խմբային աշխատանքը դաստիարակության գործիք է, որի զարգացումը պայմանականորեն հանդես է գալիս որպես դաստիարակչական նպատակ: Որպես նպատակային ձևավորման գործիք՝ զարգացնում է սովորողների կարողություններն ու հմտությունները,
4. խումբն իր անդամների վրա կարող է ունենալ կրկնակի ազդեցությունը ինչպես դրական, այնպես էլ բացասական,
5. զարգացմում-խմբի անդամների հասունությունն անցնում է մի շարք փուլերով՝ հակամարտություն, փոխշարարություն, արդյունավետություն, ամուր կապերի հաստատում:

Օգտագործված մեթոդները, գործիքները՝ պրիզմա, մտագրոհ, Վեննի գծապատկեր, քառաբաժան, ցուցադրություն-իլյուստրացիա:

Թիրախային խումբը և շրջանակը՝ /քանակ, սեռային բաշխում/ 10-րդ դասարանի 15 աշակերտներ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, պատասխան հետազոտական հարցերին

1. Խմբային գործունեության դաստիարակչական գործառույթները կապված են սովորողների խմբի անդամների հասարակական մշակութային հաղորդակից դարձնելու, նրանց մոտ սոցիալիստական ուղղվածության, մշակութային կարողունակության ձևավորման հետ՝ որպես անձի տիպաբանական կարևորագույն հատկանիշ:
2. Հայոց պատմության դասընթացում խմբային աշխատանքի տարբեր տեսակների միջոցով ձևավորվում ու զարգանում են սուբյեկտային հմտություններ (առաջին հերթին ճանաչողական առարկայական-գործնական) միջանձնային շփման ու համատեղ գործունեության ընթացքում: Ընդգրկված լինելով խմբային կենսագործունեության կառուցվածքում՝ խմբում, առաջանում են այն հարաբերությունները, որոնք աշակերտներին համախմբում են կոլեկտիվի մեջ և վերջինիս դարձնում են դաստիարակության սուբյեկտ:
3. Հայոց պատմության դասընթացում արդյունավետ են խմբային աշխատանքի այն տեսակները, որոնք խարսխված են տեղեկատվական տեխնոլոգիաների ու համացանցի կիրառման վրա, քանի որ ձևավորում են նաև համապատասխան հմտություններ ու կարողություններ: Մշակութային կարողունակությունը զարգացնող միջոց են նախագծային աշխատանքները, մտագրոհը և ուսուցման այլ հնարներ ու մեթոդներ: Իրականացված հետազոտությունը ցույց է տվեց, որ դաշտային աշխատանքի կիրառումը նպատակահարմար է մշակութային կարողունակության բացահայտման համար, ըստ որի՝ հնարավոր է իրականացնել նշված կարողունակության զարգացման գործընթացը սովորողների մոտ:

Օգտագործված գրականության ցանկ

Հանրակրթության պետական չափորոշիչ,

http:/www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

Браун Р., Межгрупповые отношения//Перспективы социальной психологии. М., 2001.

Звягинцева Е.В.., Методы изучения познавательных способностей школьников/ Е.В.Звягинцева//Школьные технологии, 2009, N2.

Историясоциальной педагогики: Хрестоматия-учеб.: Учеб. пособие. Под. ред. М.А.Галагузевой. Москва, 2000.

Коджаспирова Г.М., История образования и педгогической мысли: Таблицы, схемы, опорные конспекты: Учеб. пособые для студ. высш. учеб. заведений., М.2003.

Конникова, Т.Е., Коллектив и формирование личностишкольника/ Т.Е. Конникова. – М.: Просвещение, 2000.

Макаренко А.С., Педагогические сочинения в восьми томах, Том 3; Педагогика; Москва, 1984.

Макаренко А.С., Коллектив и воспитание личности, М.: Педагогика, 1972.

Հավելվածներ

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Հետազոտություն

Առարկա – Հայոց պատմություն

Դասարան – 10-րդ

Թեմա – Հայկական մշակույթը 10-14-րդ դարերում:

Թեմայի վերաբերյալ իրականացրել ենք հետազոտական աշխատանք: Առաջին փուլում իրականացրել ենք դաշտային աշխատանք՝ կիրառելով հետևյալ հարցերը.

1. Կարո՞ղ եք նշել 10-14-րդ դարերի հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները:
2. Մշակույթի զարգացման համար որևէ նախադրյալ անհրաժե՞շտ է:
3. Հայկական մաշկույթն ունի՞ որևէ ուղղվածություն:
4. Հայկական մաշակույթի զարգացումը նպաստու՞մ է մեր ինքնության պահպանմանը:
5. Կա՞ որևէ ոլորտ, որի զարգացումն աչքի է ընկնում 10-14-րդ դարերում:

Առաջադրել ենք պատասխանի երկու տարբերակ՝ գիտեմ և չգիտեմ: Վերլուծելով պատասխանի տարբերակները՝ ստացել ենք ընդհանուր պատկեր:

Հետազոտության ընթացքը կազմող 15 աշակերտից միայն 9-ը գիտեր հարցերի պատասխանները: Դաշտային աշխատանքը ցույց տվեց, որ մշակութային կարողունակության բացահայտումն ու ձևավորումը ենթադրում են համալիր գործողություններ, որոնց առաջին քայլը դաշտային աշխատանքն է: Դաշտային աշխատանքի միջոցով բացահայտում ենք ընդհանուր պատկերը, հետազոտության

երկրորդ փուլում կիրառելով համապատասխան մեթոդներ՝ սկսում ենք մշակութային կարողունակության ձևավորման ու զարգացման գործընթաց:

Հետազոտության 2-րդ փուլում դասարանը բաժանեցինք չորս խմբի: Ընտրեցինք վեբ-որոնման մեթոդը՝ կազմակերպելով համագործակցային աշխատանք երկու խմբերի հետ: Վերջիններիս հանձնարարվել էր վեբ-որոնումը կիրառելով՝ պատրաստել սահիկաշար 10-14-րդ դարերի հայկական մշակույթի մասին: Մյուս երկու խմբերին հանձնարարել էինք կարդալ դասագրքային նյութը: Հետազոտության ընտրանքը կազմել են 10-րդ դասարանի 15 աշակերտներ: Դասարանում չորս խմբերի համար կազմակերպեցինք խմբային աշխատանք՝ կիրառելով պրիզմայի մեթոդը: Խմբերին հանձնարարվեց ավարտել «Հայկական մշակույթ» մեկնաբառով սկսվող պրիզման: Աշակերտները լրացրին պրիզման մշակույթին առնչակից և մշակույթը բնորոշող բառերով: Խմբերի աշխատանքը գնահատվում է 10-միավորանոց համակարգով: Համագործակցային աշխատանքի ավարտից հետո խմբերը բացատրեցին, թե ինչու են ընտրել նշված բառերը կամ կապակցությունները: Գնահատեցինք՝ հենվելով պրիզմայում ընդգրկված բառերի ու արտահայտությունների ճիշտ և համապատասխան ընտրությունից. արդյո՞ք խմբային աշխատանքի տեսակը օգնել է աշակերտներին հասկանալ ոչ միայն թեման, այլ մշակույթը մեկնաբանել որպես ազգային արժեք, արդյո՞ք աշակերտները ընկալել են թեման և միջնադարյան հայկական մշակույթի զարգացման հիմանական ուղղություններն ու առանձնահատկությունները: Խմբային աշխատանքի նշված տեսակների ու մտագրոհ մեթոդի կիրառումը ցույց տվեց, որ 10-14-րդ դարերի հայկական մշակույթի մասին ավելի համապարփակ գիտելիքներ ձեռք բերել են խմբային աշխատանքի միջոցով նյութին տիրապետող աշակերտները, իսկ նրանք, ովքեր սահմանափակվել են դասագրքային նյութով, հանդես եկան պակաս ակտիվությամբ:

Խմբային աշխատանքի իրականացման ժամանակ սովորողների ակտիվությունը - 30%, 20%, 50% :

Այնուհետև աշակերտները ցուցադրեցին իրենց պատրաստած սահիկը՝ մեկնաբանելով հայկական մաշկույթին առնչվող դրվագները: Մշակութային

կարողունակությունը բարձրացնելու նպատակով կազմակերպեցինք քննարկում՝ մյուս աշակերտներին ևս ներառելով խմբային աշխատանքի մեջ: Մտագրոհ մեթոդով առաջադրեցինք հարցեր հայրենիքի ու մշակույթի մասին: Վեննի գծապատկերով առաջադրեցինք հայրենիքի ու մշակույթի առանձնահատկությունները: Քառաբաժան մեթոդով ներկայացրինք հայրենիքը, ծննդավայրը, հավատը, լեզուն՝ որպես մեր ինքնության ու մշակույթի անքակտելի բաղադրիչներ: Աշակերտներին հանձնարարեցինք խմբային աշխատանքի այլ տեսակ՝ ընտրելով մշակույթի որևէ բնագավառ կազմակերպել ցուցադրություն-իլյուստրացիաները՝ հայկական մշակույթի մասին:

Տաթևի վանք

Սանահին վանական համալիր

Հաղպատ



Գեղարդավանք

Գոշավանք /Խաչքարագործ՝ Պողոս/

Սևան վանական համալիր

Տրդատ ճարտարապետ



Անիի Մայր տաճար



Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցի



Նորավանք /Խաչքարագործ վարպետ՝ Մոմիկ/